ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 13-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15.11.2021 թվականի թիվ131 որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1.. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից տրամադրել վարձակալության.

Հողամաս 1. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 161.25 հա (ծածկագիրը՝ 10-017-0225-0001, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 325 000 ՀՀ դրամ:

Հողամաս 2. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 29.91147 հա (ծածկագիրը՝ 10-017-0224-0003, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 60 000 ՀՀ դրամ:

Հողամաս 3. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 7.06161 հա (ծածկագիրը՝ 10-017-0234-0001, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 15 000 ՀՀ դրամ:

Հողավանդակ 4. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 285.35556 հա (ծածկագիրը՝ 10-017-0231-0001, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 575 000 ՀՀ դրամ:

Հողավանդակ 5. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 38.21361 հա (ծածկագիրը՝ 10-017-0233-0001, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 80 000 ՀՀ դրամ:

Հողավանդակ 6. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 195.31191 հա (ծածկագիրը՝ 10-017-0239-0001, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 395 000 ՀՀ դրամ:

Նշված հողամասերը՝ հողավանդակ 1-6, վարձակալությամբ հատկացվում են Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով: Նշված հողատարածքների մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը կամ կազմակերպությունը իրավունք չունի խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 14-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.262ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՉՅԱ ԼԵՆԻԿԻ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով, որ Հրաչյա Լենիկի Թարվերդյանը (հասցե՝ գ. Չիվա 4-րդ փ. տ.18) 24.01.2022թ-ին դիմում է ներկայացրել Արենի համայնքի ղեկավարին, խնդրելով իրեն պատկանող (հասցե՝ Արենի համայնք Չիվա բնակավայր 3-րդ փողոց 4-րդ նրբանցք) 10-036-0036-0011 կադաստրային ծածկագիրկրող 0.262հա մակերեսով հողամասի և վերջինիս վրա գտնվող անասնագոմի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին և հաշվի առնելով Եղեգնաձորի շրջանի Չիվա գյուղի գյուղխորհրդի 1991թ.-ի <<Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի>> նախագահի և 3 անդամների ստորագրությամբ գրությունը, տեղեկանք ՀՀ կադաստրի կոմիտեից (փաստաթղթի ծածկագիր՝ 21122021-0104) անշարժ գույքի գնահատման մասին, որտեղ որպես սեփականատեր գրանցված է Հրաչյա Լենիկի թարվերդյանը, տեղեկանքը (հ. 22561841636412405, առ 06.08.2019թ.), Արենիի համայնքապետարանից գույքահարկի վճարումների մասին, որտեղ որպես սեփականատեր գրանցված է Հրաչյա Լենիկի Թարվերդյանը, <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մասնաճյուղից տրված 16.07.2019թվականի թիվ Վձ-558 գրությունը, ՀՀ հարկային տեսչության կողմից Հ. Թարվերդյանին ներկայացված 12.09.1995թվականի և 15.10.1997թվականի ծանուցագրերը՝ գույքահարկի պարտավորությունների մասին (թվով 4 հատ) Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 118-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2005թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով, որ 0.262հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, Արենի համայնքի ղեկավարը որոշում է՝

1. Վերականգնել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Չիվա բնակավայրում գտնվող 10-036-0036-0011 ծածկագրով 0.262հա հողամասի և վերջինիս վրա գտնվող անասնագոմի նկատմամբ Հրաչյա Լենիկի Թարվերդյանի սեփականության իրավունքը՝ ճանաչելով Հ. Թարվերդյանի սեփականության իրավունքը վերոնշյալ հողամասի և դրա վրա գտնվող անասնագոմի նկատմամբ,

2. Վերոնշյալ անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 7:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացին որպես սեփականաշնորհում ստացել է անասնագոմը, առաջարկել Հ. Թարվերդյանին անասնագոմի սպասարկման համար անհրաժեշտ 0.262հա հողամասի համար համայնքային բյուջե վճարել ներկա պահին գործող հողմասի կադաստրային արժեքը՝ 337 ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար, ընդամենը՝ 882 940 ՀՀ դրամ:
4. Սույն որոշման մեկ օրինակ հանձնել հասցեատիրոջը ՀՀ կադաստրի կոմիտե ներկայացնելու և պետական գրանցում կատարելու համար:
5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկվել Արենի համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կերպով հանձնելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 15-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԽՈՐԵՆ ՍԱՐԳԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 0.31667 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Խորեն Սարգիսի Ավետիսյանի սեփականություն հանդիսացող 0.31667 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-020-0066-, գործառնական նշանակությունը՝ գյուղ. արտադրական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասին և շինությանը տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, գ. Ելփին՝ 24փողոց, 2 փկղ. թիվ 3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 16-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ԵՂԵԳՆԱՁՈՐԻ «ԵՐԿՐԱՊԱՀՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ»,ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՁ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 01.02.2022 թվականի թիվ 1 նիստի արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենի համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից Արենի համայնքի ներքոնշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

հ/հ	Անուն,ազգանուն,հայրանուն	Դրամական օգնության չափը /հազար ՀՀ դրամ/	Բնակավայր
1.	Ներսես Վոլֆիկի Մարգարյան	30	Ագարակաձոր
2.	Ալիկ Խաչիկի Բաբայան	30	Աղավնաձոր
3.	Գագիկ Միցխարի Մաթևոսյան	30	Աղավնաձոր
4.	Լենա Սիրեկանի Օհանյան	20	Աղավնաձոր

5.	Աշոտ Հայկազի Խաչատրյան	20	Աղավնաձոր
6.	Լուսինե Սամվելի Մարտիրոսյան	30	Գնշիկ
7.	Բայանդուր Միհերի Մովսիսյան	15	Ելփին
8.	Սամվել Պարույրի Բաղայան	20	Ելփին
9.	Բելա Հակոբի Հակոբյան	20	Ելփին
Ընդամենը		215	

2 .Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նորածին երեխա ունեցող Լիլիթ Հունանի Զաքարյանի ընտանիքին տալ միանվագ դրամական օգնություն՝ 50 000 ՀՀ դրամ:

3. Եղեգնաձորի «Երկրապահների կամավորական միությանը» տրամադրել դրամական աջակցություն՝ 30 000 ՀՀ դրամ:

4. Համաձայն ավագանու 14.01.2022 թվականի N8-Ա որոշման, Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի բնակիչ Անազ Հովակիմի Նավասարդյանին՝ ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ, տրամադրել դրամական աջակցություն՝ 100 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**